

ՎԱՅԱՆԱԳԵՂՁԻ ԱՌԻՏՈՒՍՈՒՆԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԻՊ 1 ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏՈՎ ՀԻՎԱՆԴ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՅԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ. ԿԱՊԸ ՍԵՌԻ, ՏԱՐԻՔԻ, ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԴԻԱԲԵՏԻ ՎԵՐԱՅՍԿԱՄԱՆ ՀԵՏ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Լ.Վ.^{1,2}, ԱՂԱՋԱՆՈՎԱ Ե.Ս.,^{1,2} ԳԼՈՐԳՅԱՆ Մ.Ի.³

¹ Երևանի Մ. Հերացու անվ. պետ. բժշկական համալսարանի Էնդոկրինոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

² «Մուրացան» հիվանդանոցային համալիրի Էնդոկրինոլոգիայի կլինիկա, Երևան, Հայաստան

³ «Մուրացան» հիվանդանոցային համալիրի ախտորոշման կենտրոն, Երևան, Հայաստան

Տիպ 1 շաքարային դիաբետը (ՇԴ) հաճախ համակցվում է նաև այլ աուտոիմունային հիվանդությունների, մասնավորապես, աուտոիմունային թիրեոիդիտի (ԱԻԹ) հետ:

Այս հոդվածում կատարվել է բժշկական գրականության գրականահավաք, ուշադրություն դարձնելով գենետիկական գործոնների, հիվանդության պատմության, տարիքի և սեռի հետ պայմանավորված կապերին: Այս հիվանդությունների գենետիկական ռիսկերը համադրվում են և ընդգրկում գլխավոր հյուսվածքահամատեղելիության կոմպլեքսի (MHC) այնպիսի գեներ, ինչպիսիք են՝ մարդկային լեյկոցիտար անտիգենի (HLA) DR և DQ ալելները և MHC-I ասոցիացված A գենը:

Տիպ 1 ՇԴ-ի և ԱԻԹ-ի գենետիկական ռիսկերը վերադրվում են: Հիվանդացության ռիսկը կապված է օրգան-սպեցիֆիկ աուտոհակամարմինների հետ, որոնց որոշումը կարելի է կիրառել տիպ 1 ՇԴ-ով և ԱԻԹ-ով հիվանդ անհատներին հայտնաբերելու համար:

ԱԻԹ-ի զարգացման կապը՝ տիպ 1 ՇԴ-ի հետ, և հանդիպման հաճախականության մեծացումը՝ տարիքին զուգընթաց, ցույց են տրվել խաչաձև-բազմակենտրոնային (cross-sectional) հետազոտություններում:

Տիպ 1 ՇԴ-ով իգական սեռի անհատների մոտ ԱԻԹ-ի գերակշռումը, հատկապես սեռական հասունացման շրջանում, նույնպես բազմաթիվ երկայնաձիգ (longitudinal) և խաչաձև բազմակենտրոնային հետազոտություններով է հաստատվել:

Հոդվածում ներկայացված են և քննարկվում են Դիաբետով հիվանդ երեխաների ու դեռահասների միջազգային միության (ISPAD) և Ամերիկյան դիաբետիկ ասոցիացիայի (ADA) ուղեցույցներն ու խորհուրդները:

Հայտնի է, որ վահանագեղձի փոփոխություններն ազդում են գլյուկոզի մետաբոլիզմի վրա: Թիրեոտոքսիկոզով հիվանդների արյան մեջ գլյուկոզի մակարդակի վերահսկողությունը խանգարվում է, երբ վահանագեղձի դեկոմպենսացիան երկար ժամանակ չի շտկվում: Բոլորովին վերջերս հայտնաբերվել են հյուսվածքային մակարդակով թիրեոիդային հորոմոնների ազդեցության նոր ուղիներ, որոնք միզուցե հնարավորություն տան բացատրելու ինսուլինառեզիստենտականությունը՝ ինչպես հիպերթիրեոիդային, այնպես էլ հիպոթիրեոիդային վիճակներում: Հայաստանում, տիպ 1 ՇԴ-ով հիվանդների մոտ վահանագեղձի ֆունկցիայի խանգարումների ու հիվանդությունների ուսումնասիրումն արդիական է և կարիք ունի հետագա հետազոտման, միջազգային տեսակետներին և ուղեցույցներին ադապտացման, ինչպես նաև, մեծ անհրաժեշտություն կա դրանց ինտեգրմանը՝ Հայաստանի Էնդոկրինոլոգների ամենօրյա պրակտիկայում: